**Հավելված 6**
**«ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-23/99»*  ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

# ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՍԱԽՑԻԿՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## *N ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-23/99»**

**ք.** Թալին    «_22_» օգոստոսի **2023 թ.**

*Թալինի համայնքապետարանը* ի դեմս համայնքի ղեկավար՝ *Տավրոս Սաֆեյանի*, որը գործում է համայնքապետարան-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **ԱՅԱՅ ՍԵՔ ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն *Արամ Ավագյանի*, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է ***Թալին համայնքի կարիքների համար անվտանգության ապահովման սարքերի և տեսախցիկների ձեռքբերման մատակարարման*** պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **20** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝

պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել

ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **2 644 824**/ երկու միլիոն վեց հարյուր քառասունչորս հազար ութ հարյուր քսանչորս/ ՀՀ դրամ,որից **440 804**/չորս հարյուր քառասուն հազար ութ հարյուր չորս/ՀՀ դրամը՝ ԱԱՀ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի **25-ը:**

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[1]:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված <u>20</u> օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[2]

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

---

[1] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ___ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[3] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

---

[3] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի*

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[4]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի գտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

---

[4] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քանիհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[5]

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Թալինի համայնքապետարան | ԱՅԱՅ ՍԵՔ ՍՊԸ |
| ՀՀ Արագածոտնի մարզ ք.Թալին Գայի 1 | ՀՀ ք. Երևան Խորենացի 28 |
| Բանկը՝ ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն | Բանկը՝ Կոնվերս բան ՓԲԸ |
| ՀՀ 900462151045 | ՀՀ՝ 1930052710620100 |
| ՀՎՀՀ 05030561 | ՀՎՀՀ 04423755 |
| Համայնքի ղեկավար՝ Տավրոս Սափեյան | Տնօրեն՝ Արամ Ամայան |
| ____________ /ստորագրություն/ | ____________ /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

5

Հավելված N
« 22 » օգոստոսի 2023 թ. կնքված
«ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-23/99»*ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 1 | 35111240 | անվտանգության ապահովման սարքեր և տեսախցիկներ | | կցվում է | կցվում է | | 2 644 824 | կցվում է | ք. Թալին Գայի 1 | կցվում է | պայմանագիրը ուժի մեջ մտնելուց առնվազն 20 օր հետո |

** Եթե ընտրված մասնակցի հայտով ներկայացվել է մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մոդել ունեցող ապրանքներ, ապա դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ տեղեկատվությունը ներառվում է սույն հավելվածում։ Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մոդելի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը,ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը » սյունակը:Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից :

| Հ/Բ | Ամբողջական անվանում | Քանակ | ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը | Տեխնիկական բնութագիր |
|---|---|---|---|---|
| **1** | **IP Տեսախցիկ** | **1** | ***HIKVISION iDS-2CD7A46G0/PIZHS (8-32мм) Չինաստան*** | *ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՆԻՇՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ ՃԱՆԱՉՄԱՆ ՏԵՍԱԽՑԻԿ*<br>*Մատրիցա* 1/1.8"<br>*Min. Զգայունություն:* B/W 0.0001 lx/F1.2, *գույնը* 0.0005 lx/F1.2, 0 lx IR-*ով*<br>*Կափարիչի արագությունը:* 1 - 100,000 *վ*<br>*Աղմուկի նվազեցում(DNR):* 3D<br>WDR: 140 *դԲ*<br>*Կիզակետային հեռավորությունը:* 8 - 32 *մմ*<br>*Բացվածք/ Апертура/:* F1.7 - F1.73 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Դիտման անկյուններ: H: 42,5° - 15,1°, V: 23,3° - 8,64°, L: 49,6° - 17,3°<br>Լուսավորման տեսակը: IR<br>Լուսավորման միջակայքը: 100 մ<br>Տեսանյութի սեղմում: H.265+/H.265/H.264+/H.264<br>Տեսանյութի բիթային արագություն: 32 կբ/վ– 8 Մբիթ/վրկ<br>Թելերի քանակը: 5<br>Կադրերի արագություն (հիմնական հոսք): 2688 x 1520, 2560 x 1440, 1920 x 1080, 1280 x 720 25 կադր/վ<br>Կադրերի արագություն (ենթահոսք): 704 × 576, 640 × 480 25 կադր/վ<br>Կադրերի արագություն (ենթ2 հոսք): 1920 × 1080, 1280 × 720, 704 × 576, 640 × 480 25 կադր/վ<br>BLC-ի աջակցություն<br>HLC-ի աջակցություն<br>Պահպանման եղանակ: NAS (NFS, SMB/CIFS), ANR, microSD 256 ԳԲ<br>Ծրագրային ապահովում: iVMS-4200, Hik-Connect, Hik-Central<br>Միաժամանակյա ամիացումների քանակը: 20<br>Օգտագործողներ/Մակարդակներ: 32/3<br>Համատեղելիություն: ONVIF (PROFILE S, PROFILE G, PROFILE T), ISAPI, SDK, ISUP<br>Բրաուզերի աջակցություն: IE8+, Chrome 57.0+, Firefox 52.0+, Safari 11+<br>Ցանցային ինտերֆեյսներ: 1 RJ45 10M/100M/1000M<br>Զարթուցիչի ինտերֆեյսներ: 2-մուտք/2-ելք<br>Էլեկտրոնային պատկերի կայունացում (EIS): աջակցվում է<br>ROI: 4 գոտիներ<br>Գծի հատման հենարաններ: աջակցվում է<br>Տարածք ներխուժում: աջակցվում է<br>Տարածաշրջան մուտք գործելը և դուրս գալը: աջակցում է<br>Սուդիր բացառությունների հայտնաբերում: աջակցում է<br>Ռակյակների ապաֆոկուսի հայտնաբերում: աջակցում է<br>Շրջանակի փոփոխության հայտնաբերում: աջակցվում է<br>Էլեկտրամատակարարում: 12 V DC, 1.19 Ա<br>PoE: 802.3at, Type 2, Class 4<br>Էլեկտրաէներգիայի սպառումը: 15 Վտ<br>Աշխատանքային ջերմաստիճանը: -40 °C - 60 °C<br>Պաշտպանության աստիճանը: խոնավությունից և փոշուց (IP67) և հակավանդալային պաշտպանություն (IK10)<br>Չափերը: Ø 144 × 347 մմ<br>Քաշը: 2 կգ<br>Նյութը: ալյումին |
| **2** | **Անվտանգության տեսախցիկ /Արտաքին տեղադրման/** | **6** | *HIKVISION DS-2CE17D0T-IT3 Չինաստան* | ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԽՑԻԿ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ<br>Տեսախցիկ<br>Պատկերի ցուցիչ 2 MP CMOS<br>Մաքս. Բանաձև 1920 (H) × 1080 (V)<br>Min. Լուսավորություն 0.01 Lux @ (F1.2, AGC ON), 0 Lux IR-ով<br>Կափարիչի ժամանակը<br>PAL` 1/25 վ-ից մինչև 1/50,000 վրկ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | NTSC՝ 1/30 վ-ից մինչև 1/50,000 վրկ<br>Օր և գիշեր ICR<br>Անկյունի կարգավորում Շրջանակ՝ 0-ից 360°, թեքություն՝ 0-ից 180°, պտտում՝ 0-ից 360°<br>Ազդանշանային համակարգ PAL/NTSC<br>Ոսպնյակ<br>Ոսպնյակի տեսակը 2,8 մմ, 3,6 մմ, 6 մմ, 8 մմ, 12 մմ ֆիքսված ոսպնյակներ<br>Կիզակետային երկարություն և FOV<br>2,8 մմ, հորիզոնական FOV՝ 106,4°, ուղղահայաց FOV՝ 57,9°, անկյունագծային FOV՝ 124,6°<br>3,6 մմ, հորիզոնական FOV՝ 79,6°, ուղղահայաց FOV՝ 43,5°, անկյունագծային FOV՝ 93,7°<br>6 մմ, հորիզոնական FOV՝ 51,9°, ուղղահայաց FOV՝ 30°, անկյունագծային FOV՝ 58,8°<br>8 մմ, հորիզոնական FOV՝ 39,9°, ուղղահայաց FOV՝ 21,9°, անկյունագծային FOV՝ 46,5°<br>12 մմ, հորիզոնական FOV՝ 24,6°, ուղղահայաց FOV՝ 13,9°, անկյունագծային FOV՝ 28,1°<br>Ոսպնյակի լեռ M12<br>Պատկեր<br>Պատկերի պարամետրերի անջատիչ STD/HIG-SAT<br>Պատկերի կարգավորումներ Պայծառություն, հստակություն, ինֆրակարմիր IR<br>Շրջանակի արագություն TVI՝ 1080P@30fps , 1080P@25fps<br>Օր/գիշեր ռեժիմ Ավտո/Գույն/BW (սև և սպիտակ)<br>Լայն դինամիկ տիրույթ(WDR) Թվային WDR<br>Պատկերի բարելավում DWDR / BLC / HLC / Վ ոչ<br>Աղմուկի նվազեցում Այո՛<br>Սպիտակ հավասարակշռություն Ավտո / Ձեռնարկ<br>AGC Այո՛<br>Ինտերֆեյս<br>Տեսանյութի ելք 1 HD անալոգային ելք<br>Գեներալ<br>Նյութ<br>Դիմացի ծածկը՝ մետաղական<br>Հիմնական կորպուսը՝ պլաստիկ<br>Չափս 78,9 մմ × 75,4 մմ × 216,6 մմ (3,10″ × 2,97″ × 8,53″) Քաշ 315 գ (0,69 ֆունտ)<br>Գործառնական պայման -40 °C-ից մինչև 60 °C (-40 °F-ից մինչև 140 °F), խոնավությունը՝ 90% կամ պակաս (ոչ խտացում)<br>Համորդակցություն HIKVISION-C<br>Լեզու Անգլերեն<br>Էլ եկտրամատակարարում 12 VDC ± 25%<br>Սպառումը Առավ. 3.9 Վտ<br>IR միջակայք Մինչև 40 մ<br>Պաշտպանություն<br>Պաշտպանություն IP67 |
| 3 | **Անվտանգության ձայնային տեսախցիկ** | 15 | *HIKVISION*<br>*DS-2CD1323G0-IUF*<br>*Չինաստան* | ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԱՅԻՆ ՏԵՍԱԽՑԻԿ ՆԵՐՔԻՆ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ 2MP<br>Առանձնահատկություններ<br>Շարժման սենսոր, խոսափող<br>Շրջանակի հաճախականությունը՝ 1920 x 1080 @ 25 fps |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | /Արտաքին տեղադրման/ | | | PIR սենսոր`10 մ<br>Տեսանյութի սեղմում H.265+/H.265/H.264+/H.264/MJPEG<br>IR միջակայք`10 մետր<br>Դյուրակիրություն Ոչ<br>Տեղական պահեստավորում Ներկառուցված Micro SD/SDHC/SDXC քնիկ, մինչև 256 ԳԲ<br>Մատրիցան 1/2.7" պրոգրեսիվ սկան CMOS<br>Տեսապակի`2,8 մմ<br>Սնուցում/Սպառում 12 VDC, 0,54 A, մաքս. 6,5 Վտ<br>Չափը`102,9 × 65,2 × 32,6 մմ<br>Թույլատրություն`2 պատգամավոր<br>Միացման տեսակը`Լարային, PoE<br>Դիտման անկյուն`107°<br>Տեղադրում Արտաքին<br>Զգայունություն`0,028 Լյուքս @ (F2.0, AGC ON) |
| 4 | Անվտանգության տեսախցիկ /Արտաքին տեղադրման/ | 5 | *HIKVISION* DS-2CD1023G0E-I Չինաստան | ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԽՑԻԿ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ 2MP<br>Մատրիցա 1/2.8" պրոգրեսիվ սկան CMOS<br>Մաքս. թույլատրություն 1920x1080<br>Min. զգայունություն 0.028 Lux/F2.0, 0 Lux IR-ով<br>Կափարիչի արագություն 1/3 - 1/100,000 վ<br><br>Կափարիչի դանդաղ արագություն Աջակցված է<br>Օր/գիշեր ռեժիմ Օր/գիշեր/Ավտո/ժամանակացույց<br>Անկյունի ճշգրտում Պտտվող՝ 0° ~ 360°; Թեքություն՝ 0° ~ 180°; Պտույտ՝ 0° ~ 360°<br>Հեռինլույսի տեսակը IR<br>Հեռինլույսի տիրույթ 30 մ<br>Ոսպնյակի տեսակը Ամրագրված<br>Կիզակետային երկարություն 2,8 մմ<br>Ոսպնյակի ամրացում M12<br>բացվածք F2.0<br>Դիտման անկյուններ H: 115°; V: 62 °; D: 136°<br>Տեսանյութի սեղմում H.265+ / H.265 / H.264+ / H.264 / MJPEG<br>Թել երի քանակը 2 հոսք<br>Թույլատրության աջակցություն 2MP (1920x1080), 1.3MP (1280x960), 1MP (1280x720), D1 (704x576), VGA (640x480), CIF (352x288)<br>Կադրերի արագություն (հիմնական հոսք) 1080p - 25fps, 720p - 25fps<br>Կադրերի արագություն (ենթահոսք) D1 - 25 կադր/վ, VGA - 25 կադր/վ, CIF - 25 կադր/վ<br>Տեսանյութի բիթային արագություն 32 Կբիթ/վ - 8 Մբիթ/վրկ<br>Ձեռք բերել ու հսկողություն (AGC) Աջակցված է<br>Աղմուկի նվազեցում (DNR) 3D DNR<br>BLC Աջակցված է<br>DWDR Աջակցված է<br>ROI 1 ֆիքսված տարածք հիմնական հոսքի և ենթահոսքի համար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Դռնակների կարգավորումներ Դռնման ռեժիմը, հագեցվածությունը, պայծառությունը, հակադրությունը, հստակությունը կարգավորվում են հաճախորդի ծրագրաշարի կամ վեբ բրաուզերի կողմից<br>ethernet 1x RJ45<br>Ցանցային արձանագրություններ TCP/IP, ICMP, HTTP, HTTPS, FTP, DHCP, DNS, RTP, RTSP, RTCP, NTP, IGMP, QoS, UDP<br>Համատեղելիություն ONVIF (PROFILE S, PROFILE G), ISAPI, SDK<br>Վերակազմել կոճակը Վերակազմել վեբ բրաուզերի և հաճախորդի ծրագրաշարի միջոցով<br>Անվտանգության հրահրողներ Շարժման հայտնաբերում, տեսապատի փոփոխություն, անօրինական մուտք<br>Գործողություն, երբ գործարկիչը կրակում է Վերբեռնեք FTP, տեղեկացրեք վերահսկողության կենտրոնին, ուղարկեք էլ<br>Սնուցում DC 12V ±25%<br>PoE PoE (802.3af) (դաս 3)<br>Էլեկտրաէներգիայի սպառում DC 12V՝ 0.3A, 3.5W; PoE՝ (802.3af, 36-57V), 0.2A - 0.1A, max. 4,5 Վտ<br>Աշխատանքային ջերմաստիճան -30°C - +60°C<br>Խոնավություն <95%<br>Պաշտպանության աստիճանը IP67<br>Չափերը 70 x 173 մմ<br>Քաշը 270 գ<br>Նյութ Մետաղ + Պլաստիկ |
| **5** | **Տեսախցիկ Լարիչ DVR** | **6** | HIKVISION<br>DS-7204HQHI-M1/FA<br>Չինաստան | ՏԵՍԱՁԱՅՆԱԳՐԻՉ DVR<br>Պրոցեսորային պաշտպանություն (պիքսելներ) 2<br>Օբյեկտների դասակարգում Խորը ուսուցման շարժման հայտնաբերում 2.0-ը լրել յալն միացված է, բոլոր անալոգային պիքսելների համար, այն կարող է դասակարգել մարդկանց և տրանսպորտային միջոցները և զգալիորեն նվազեցնում է կեղծ ահազանգերը, որոնք առաջանում են այնպիսի առարկաներից, ինչպիսիք են տերևները<br>Անալոգային մուտքեր 4<br>HDCVI տեսախցիկներ 4 MP, 1080p, 720p 25 fps<br>HD տեսախցիկներ 4MP, 1080P, 720P 25 fps<br>TVI տեսախցիկներ 4 MP, 3 MP, 1080p 25 fps; 720p 50 կադր/վրկ<br>CVBS տեսախցիկներ Աջակցում է<br>IP տեսախցիկներ 1ch (մինչև 5), Ընդլայնված IP ռեժիմը միացված է՝ 2ch (մինչև 6), յուրաքանչյուրը մինչև 4Mbps<br>Մուտքային հոսք 72 Մբիթ/վրկ<br>Աուդիո ինտերֆեյսներ 1 in (4 coaxial) / 1 out (RCA)<br>Երկկողմանի զրույց Աջակցում է<br>Տեսանյութի ելքային միջերեսներ 1 HDMI, 1 VGA<br>Տեսանյութի ելքային լուծում HDMI, VGA՝ 1920×1080, 1280×1024, 1280×720, 1024×768<br>Տեսանյութի սեղմում H.265 Pro+/H.265 Pro/H.265/H.264+/H.264<br>Կադրերի արագություն (հիմնական հոսք) 4 MP Lite 15 fps; 1080p Lite/720p/WD1/4CIF/VGA/CIF 25fps<br>Կադրերի արագություն (ենթահոսք) WD1/4CIF 12 fps; CIF 25 կադր/վրկ<br>Տեսանյութի բիթային արագություն 32 կբ/վ - 6 Մբիթ/վրկ<br>Աուդիո սեղմում G.711u<br><br>ethernet 1 RJ45 10/100 Մբիթ/վրկ<br>WiFi USB ինտերֆեյսի միջոցով Wi-Fi ցանցին միանալու հնարավորություն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Մաքս. օգտագործողների թիվը 32<br>Աերքին HDD 1 SATA մինչև 10 TB<br>USB 2x USB 2.0<br>Սնու ցու մ 12 V DC, 1,5 Ա<br>Էլ եկտրաէներգիայի սպառու մ 8 Վ<br>Աշխատանքային ջերմաստիճան -10 °C - +55 °C<br>Չափերը 200×200×45 մմ<br>Քաշը 1 կգ<br>Փաթեթի չափը (Վx Ֆx Կ) 80 x 240 x 315 մմ<br>Համախառն քաշը 1,144 կգ |
| 6 | **Տեսախցիկի լազրիչ**<br>NVR<br>**/16 սեսպիցիկ/** | 2 | *HIKVISION*<br>DS-7616NI-K2<br>Չինաստան | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ NVR 16 ՏԵՍԱԽՑԻԿՈՎ<br>Վիդեո/ատ ուդիո մու տքագրու մ<br>Տեսանյու թի սեղմման ձևաչափ H.265/H.265+/H.264/H.264+/MPEG4<br>IP տեսախցիկներ 16 ալիք<br>Երկկողմանի աու դիո մու տքագրու մ1 ալիք RCA (2.0 Vp-p, 1kΩ)<br>Մու տքային թողու նակու թյու ն 160 Մբիթ/վրկ<br>Ելքային թողու նակու թյու ն 160 Մբիթ/վրկ<br>Տեսա/ձայնային ելք<br>Տեսանյու թի ելք 1 HDMI, 1 VGA (անկախ)<br>Ել քի լու ծու մ HDMI`<br>4K (3840×2160)/30Հց, 1920×1080/60Հց, 1600×1200/60Հց, 1280×1024/60Հց, 1280×720/60Հց, 10240×1080/60Հց, 10240×1200/60 Հց, 1024×120/60 Հց, 1024 × 1200/60 Հց: 600<br>թ<br>× 1200/60 Հց, 1280 × 1024/60 Հց, 1280 × 720/60 Հց, 1024 × 768/60 Հց<br>Աու դիո ելք 1 ալիք RCA (գիծ, 1 KΩ)<br>Ձայնագրու թյու նը<br>Ժել երի քանակը 2<br>հիմնական հոսքը 8MP/ 6MP/ 5MP/ 4MP/ 3MP/ 1080p/ UXGA/ 720p/ VGA/ 4CIF/DCIF/ 2CIF/ CIF/ QCIF<br>Լրացու ցիչ հոսք Համաձայն կոն. Տեսախցիկ<br>Հոսքի տեսակը Տեսանյու թ, վիդեո և աու դիո<br>Տեսանյու թի բիթային արագու թյու ն 32 կբիթ/ վ - 16 Մբիթ/ վրկ<br>Աու դիո բիթային արագու թյու ն Համաձայն կոն. Տեսախցիկ<br>Սինքրոնացված նվագարկու մը 2ch @ 8MP (25fps) / 4ch @ 4MP (25fps) / 8ch @ 1080p (25fps), մաքս. 16 վիդեո ալիք<br>Զրոյական ալիք Աջակցված է<br>Առանձնահատկու թյու ններ<br>ANR Աջակցված է<br>Տեղական խել ացի որոնու մԱջակցված է<br>Տեսախցիկների խել ացի գործառու յթներ Աջակցված է<br>Ցանց<br><br>Հեռավոր կապեր 128<br>Արձանագրու թյու ններ :TCP/IP, DHCP, HIK Cloud P2P, DNS, DDNS, NTP, SADP, SMTP, NFS, iSCSI, UPnP™, HTTPS |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | HDD<br>SATA 2 SATA<br>Ծավալը մինչև 6 ՏԲ յուրաքանչյուրը<br>Արտաքին ինտերֆեյսներ<br>Ցանցային ինտերֆեյսներ 1 RJ-45 10M / 100M/ 1000M Ethernet<br>USB ինտերֆեյս Առջևի վահանակ՝ 1 × USB 2.0;<br>Հետևի վահանակ՝ 1 × USB 3.0<br>Ահազանգի մուտք/ելք 4/1<br>Ընդհանուր են<br>Սնուցում DC12V<br>Էլեկտրաէներգիայի սպառում (առանց HDD) ≤15 Վտ<br>Աշխատանքային պայմանները -10°C...+55°C, խոնավություն 10% ~ 90%<br>Չափերը 385×315×52 մմ<br>Զանգված) ≤1 կգ (առանց HDD) |
| 7 | PoE SWITCH | 2 | HIKVISION<br>DS-3E0518P-E/M<br>Չինաստան | PoE Switch<br>Թողունակություն 36 Գբ/վրկ<br>Մուտքերի քանակը 16<br>MAC 8000 գրառում<br>Ցանց<br>Ցանցային ինտերֆեյս 16 RJ45 1000M PoE կայծակային պաշտպանությամբ 6kV / 1 Uplink port 1000M Ethernet / 1 1000M SFP uplink port<br>PoE<br>PoE Ստանդարտ 802.3af/at<br>PoE Power 230 Վտ<br>Հիմնական<br>Սնուցում AC 100-240V; 4Ա<br>Աշխատանքային Պայմանները 0°C...+40°C |
| 8 | Կոշտսկավառակ HDD 4ՏԲ | 2 | SEAGATE<br>ST4000VX000-520<br>Չինաստան | ԿՈՇՏ ՍԿԱՎԱՌԱԿ HDD 4 TB<br>IntelliPower տեխնոլոգիայով կոշտսկավառակները նախըված են HD տեսանկարահանման 24/7 շարունակական ռեժիմով և ունեն էներգիայի ավելի ցածր սպառում: Սերիական ATA ինտերֆեյսի միացում:<br>տարողությունը՝ 4 ՏԲ<br>Ինտերֆեյս՝ Serial ATA/600<br>Spindle արագությունը: 5400 RPM IntelliPower<br>Չափի ձևաչափը՝ 3,5 դյույմ<br>Քեշ հիշողություն՝ 64 ՄԲ<br>Տեխնոլոգիա<br>NCQ - Այբենի հրամանատրության հերթեր<br>Allframe - Նվազեցնում է վիդեո շրջանակի «կորուստ» երևույթը<br>Նախագծված է շարունակական շահագործման 24/7:<br>Քաշը՝ 0,675 կգ |
| 9 | Կոշտսկավառակ HDD 1ՏԲ | 6 | SEAGATE<br>ST1000VX001-520 | ԿՈՇՏ ՍԿԱՎԱՌԱԿ HDD 1 TB |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Չինաստան | Բոլոր WD Purple կոշտ սկավառակները հագեցած են AllFrame 4K տեխնոլոգիայով, որը բարելավում է A/V հոսքը՝ օգնելով նվազեցնել շրջանակների կորուստը, բարելավել ընդհանուր տեսանյութի նվագարկումը և ավելացնել կոշտ սկավառակների ներդիրների քանակը, որոնք աջակցվում են NVR-ում: Սկավառակներն ապահովում են աշխատանքի ծանրաբեռնվածության արագությունը նույնիսկ մինչև 180 ՏԲ տարեկան, ինչը երեք անգամ ավելի բարձր է սեղանադիր համակարգիչների համար նախատեսված կոշտ սկավառակների համեմատ: Այս կրիչները օպտիմիզացված են 24/7 ռեժիմով անընդհատ HD տեսանկարահանման և նվազեցնում են էներգիայի սպառումը: Սերիական ATA ինտերֆեյսի միացում:<br>Տարողությունը՝ 1 ՏԲ<br>Ինտերֆեյս՝ Serial ATA/600<br>Spindle արագությունը: 5400 RPM<br>Չափի ձևաչափը՝ 3,5 դյույմ<br>Քեշ հիշողություն՝ 64 ՄԲ<br>Տեխնոլոգիա<br>NCQ - Աշխատանքի հրամանատարության հերթեր<br>Allframe 4K - Նվազեցնում է վիդեո շրջանակի «կորուստ» երևույթը<br>IntelliSeek - նվազեցնել շրջապտույտի վնասակար աղմուկը և թրթռումները<br>Ընդլայնված ծանրաբեռնվածության վարկանիշ Կոշտ սկավառակի ծանրաբեռնվածության բարձրացում՝ նույնիսկ տարեկան մինչև 180 ՏԲ<br>Նախագծված է շարունակական շահագործման 24/7:<br>Քաշը՝ 0,448 կգ |
| 10 | ***Բազմալարային էլեկտրասնուցման սարք*** | ***6*** | *HIKVISION*<br>DS-2FA1225-D4<br>Չինաստան | ԲԱԶՄԱԱԼԻՔԱՅԻՆ ԷԿԼԵԿՏՐՈՄՆՈՒՅՄԱՆ ՍԱՐՔ<br>***Ուժ*** *48 Վ*<br>***Մուտքային լարում*** *150 - 285 VAC*<br>***Ելքային լարում*** *12V DC*<br>***Ելքային հոսանք*** *1 Ա*<br>***Առանձնահատկություններ*** *C4 մուտք DC վարդակից ելք*<br>***Աշխատանքային ջերմաստիճան*** *0°C - 40°C*<br>***Չափերը*** *144×80×33 մմ*<br>***Փաթեթի չափը (Լx Յx Վ)*** *115 x 40 x 150 մմ*<br>***Համախառն քաշը*** *0,308 կգ*<br> |
| 11 | /Ցանցային մալուխ ներքին օգտագործման UTP Cat 5E / | ***900մ*** | ***IN VI Cable UTP Cat 5E Հայաստան*** | ***ՑԱՆՑԱՅԻՆ ՄԱԼՈՒԽ ՆԵՐՔԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ***<br>*305 մ CAT5E UTP ցանցային մալուխ (պինդ պղինձ, 0,45 մմ, CMX)*<br>*Ամբողջ տրամագծով 305 մ CAT5E ցանցային մալուխ*<br>*Յիմնական Գույնը* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | 1 Ափունկ - Կապույտ/ Կապույտ2 Ափունկ - Նարնջագույն/ Նարնջագույն,3 Ափունկ - Կանաչ / Կանաչ 4 Ափունկ - Շագանակագույն/ Շագանակագույն,<br>Փաթեթավորում<br>Փայտե սկուտեղ և ստվարաթուղթ<br>Ստվարաթղթե Չափ<br>Ընդհանրապես<br>Փաթեթավորման երկարությունը<br>305±1.5մ/80±0.5մ<br>Rip-Cord<br>Այո՛<br>Ջրահեռացման Մետաղալար<br>Ոչ<br>Դաշտանային Ֆիզիկական Հատկություններ<br>Մինչ ծերացումը առաձգականություն(Mpa) ≥13.5, երկարացում(%) ≥150, ծերացման ժամանակաշրջան(℃×ժամ) 100℃×24h×7 օր, ծերացումից հետո առաձգականություն(Mpa) ≥12.5, երկարացում(%) 5, ≥1 (-20±2℃×4ժ) 8×Ամպ ուխOD, Տեսանելի ճաքեր չկան,<br>Էլեկտրական Բնութագրեր(20℃)<br>1,0-100,0 ՄՀց դիմադրությունը(Ω) 100±15,1,0-100,0 ՄՀց ուշացում(ns/100 մ) ≤45, DC դիմադրությունը Ω/100 մ առավելագույնը 14,8, DC հաղորդիչի դիմադրության անհավասարակշռությունը(%), առավելագույնը 5: |
| **12** | /Ցանցային մալուխ արտաքին օգտագործման UTP Cat 5E / | **305մ** | ***IN VI Cable FTP OUTDOOR Չկ ապրանք*** | **ՑԱՆՑԱՅԻՆ ՄԱԼՈՒԽ ԱՐՏԱՔԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ**<br>305 մCAT5E UTP արտաքին ցանցային մալուխ(պինդ պղինձ, 0,5 մմ)<br>305 մCAT5E UTP բացօթյա ցանցային մալուխ<br>Հիմնական Գույնը<br>1 Ափունկ - Կապույտ/ Կապույտ2 Ափունկ - Նարնջագույն/ Նարնջագույն3 Ափունկ - Կանաչ / Կանաչ 4 Ափունկ - Շագանակագույն/ Շագանակագույն<br>Փաթեթավորում<br>Փայտե սկուտեղ և ստվարաթուղթ<br>Ստվարաթղթե Չափ<br>Ընդհանրապես<br>Փաթեթավորման երկարությունը<br>(305±0.5)մ<br>Rip-Cord<br>Այո՛<br>Ջրահեռացման Մետաղալար<br>Ոչ<br>Դաշտանային Ֆիզիկական Հատկություններ<br>Մինչ ծերացումը առաձգականություն(Mpa) ≥10 երկարացում(%) ≥300<br>Ծերացման շրջան(℃×ժամ) 100℃×24h×10օր<br>Ծերացումից հետո առաձգականություն(Mpa) ≥12.5 երկարացում(%) ≥125<br>Սառը թեքություն(-20±2℃×4ժ) 8×Ամպ ուխOD, Չկան տեսանելի ճաքեր<br>Էլեկտրական Բնութագրեր(20℃)<br><br>1.0-100.0 ՄՀց դիմադրությունը(Ω) 100±15 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | DC դիմադրությունը (Ω/100 մ) առավել ազդույնը 9,5<br>DC հաղորդիչի դիմադրության անհավասարակշռություն (%) առավել ազդույնը 2.0<br> |
| **13** | /CCTV 4+1 մալուխ տեսահսկման համար | **30մ** | **IN VI Cable**<br>**CCTV 4+1**<br>***Հայաստան*** | ***ՍՆՈՒՑՄԱՆ ԵՎ ՏԵՍԱՆԿԱՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ***<br>*CCTV 4+1 մալուխը օգտագործվում է տեսախցիկի, դոմոֆոնի և էլեկտրամատակարարման ազդանշանը փոխանցելու համար: Այն բաղկացած է պղնձե միջուկով կոաքսիալ մետաղալարից, մեկուսիչ և զննման ժապավենից, երկու միջուկից՝ 0,22 մմ2 խաչմերուկով և երկու միջուկից՝ 0,5 մմ2: Այս տեսակի մալուխը կարող է ազդանշաններ փոխանցել մինչև 100 մ հեռավորության վրա առանց որակի կորստի:*<br> |
| **14** | BNC միակցիչ | **20** | ***SUNSKY***<br>***BNC***<br>***Չինաստան*** |  |
| **15** | RJ-45 միակցիչ | **500** | ***SUNSKY***<br>***RJ-45***<br>***Չինաստան*** |  |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **16** | RJ-11<br>միակցիչ | **200** | ***SUNSKY***<br>***RJ-11***<br>***Չինաստան*** |  |
| **17** | *սերվերային*<br>*պահարան* | ***1*** | *TOTEN*<br>*W2.6612.9001*<br>***Չինաստան*** | ***ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՊԱՀԱՐԱՆ***<br>տեսակ պատ<br>ֆորմ ֆակտոր 12u<br>դաս կոմուտացիոն<br>պաշտպանության ip20<br>առավել ագույն քաշը (կգ) 50 կգ<br>առանձնահատկություններ առջևին դուռ՝ ապակի,կողային դուռ՝ ծակոտկեն մետաղ<br>իրանի նյութը ապակի-մետաղ,<br>ներկառուցման չափեր 650 x 600 մմ<br>չափերը 610 x 600 x 650 մմ<br>քաշ 8 կգ<br> |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **18** | *Անվտանգության տուփ DVR-ի համար* | **6** | EL<br>*Հայ աստղ* | ***ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏՈՒՓ DVR-Ի ՀԱՄԱՐ***<br>Դ ատմամ ատ վը նախատեսված է սյ ու ների վրատեղադրման համար:<br>չափերը՝ 250x195x96<br>Նյութի հաստությունը-0.5-1մմ,<br>ջրակայունություն, դիմադրողականություն մինչև +60 %<br> |

*** *գնման առարկան (ապրանքը) նոր է ,չօգտագործված, համապատասխանում է վերը նշված տեխնիկական բնութագրերին: Բեռնաթափումը և տեղադրումը իրականացվում է անվճար : Կազմակերպության տեխնիկական սպասարկողը /Մելիք Մարուքյան/ սերտիֆիկացված է /certificat Number: HCSA-042023-0997-01-2783 /:Աշխատանքներն կիրականացվի շինարարական նորմերին, կանոններին և տեխնիկական պայմաններին համապատասխան : Համակարգը հանձնելուց հետո պատրաստ կլինի շահագործման Տրամադրվում է 1 տարվա անվճար տեխնիկական և ծրագրային սպասարկում :*

*** *Տեղադրման հասցեներ՝ ՀՀ Արագածոտնի մարզ ք. Թալին Գայի 1 , Թալինի համայնքապետարանի վարչական շենք ,Մ. Քոթանյան -Ռ.Միրոյան - Երևանյան -Սպանդարյան Խաչմերուկ, Երևանյան 15/2*

*ՀՀ Արագածոտնի մարզ Թալին համայնքի Արագածավան բնակավայր, Բաղրամյան 71 /գյուղապետարանի շենք/*

*ՀՀ Արագածոտնի մարզ Թալին համայնքի Արտենի բնակավայր, Իսահակյան 1 /գյուղապետարանի շենք/*

| | |
|---|---|
| **ԳՆՈՐԴ**<br>Թալինի համայնքապետարան<br>ՀՀ Արագածոտնի մարզ ք.Թալին Գայի 1<br>Բանկը՝ ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն<br>ՀՀ 900462151045<br>ՀՎՀՀ 05030561<br>Համայնքի ղեկավար՝ Տափրոս Սափեյան<br>_______________<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | **ՎԱՃԱՌՈՂ**<br>ԱՅԱՅ ՍԵՔ ՍՊԸ<br>ՀՀ ք. Երևան Խորենացի 28<br>Բանկը՝ Կոնվերս բանկ ՓԲԸ<br>ՀՀ՝ 1930052710620100<br>ՀՎՀՀ՝ 04423755<br>Տնօրեն՝ Արամ Ավագյան<br>_______________<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

*Հավելված N 2*
*« 22 » օգոստոսի 2023թ. կնքված*
***« ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-23/99»*** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 35111240 | անվտանգության ապահովման սարքեր և տեսախցիկներ | | | | | | | | | 2 644 824 | 2 644 824 | 2 644 824 | 2 644 824 | 2 644 824 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ԳՆՈՐԴ**
Թալինի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ ք.Թալին Գայի 1
Բանկը՝ ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՀ 900462151045
ՀՎՀՀ 05030561
Համայնքի ղեկավար՝ Տավրոս Սաֆեյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
ԱՅԱՅ ՍԵՔ ՍՊԸ
ՀՀ ք. Երևան Խորենացի 28
Բանկը՝ Կոնվերս բանկ ՓԲԸ
ՀՀ՝ 1930052710620100
ՀՎՀՀ՝ 04423755
Տնօրեն՝ Արամ Ավագյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ